

Կ Ա Ր Գ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ
ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում լավագույն ուսանողներին և սովորողներին ամենամյա կրթական մրցանակների շնորհման համար թեկնածուներին ներկայացվող պահանջները, առաջադրման կարգը և կրթական մրցանակի յուրաքանչյուր անվանակարգի համար նախատեսված պարգևատրման չափը և մրցանակների քանակը:

2. Մրցանակին կարող են հավակնել Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցմամբ ուսանողները և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 10-12-րդ դասարանի սովորողները՝ կրթության բնագավառի պետական լիազոր մարմնի առաջադրած պայմաններին համապատասխանող և նրա կողմից հաստատված ցանկում ընդգրկված բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 10-12-րդ դասարանի սովորողները, ովքեր տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ SS) ոլորտում, ուսումնառության ընթացքում ցուցաբերել են բարձր առաջադիմություն, մասնակից են եղել SS ոլորտի տարբեր նորարարական աշխատանքներին (մրցույթներ, տպագրված հոդվածներ):

3. Մրցանակի հավակնորդները դիմումները ներկայացնում են իրենց բարձրագույն ուսումնական հաստատությունների հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ղեկավարությանը՝ մրցանակաբաշխության հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքում և

զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական կամ տեղական ոռադիո, հեռուստատեսություն, մամուլ) հրապարակված հայտարարության հիման վրա: Բարձրագույն ուսումնական և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ղեկավարությունը դիմումների դիտարկումից հետո յուրաքանչյուր անվանակարգի համար լավագույն տասը հավակնորդների փաստաթղթերի փաթեթները 5-օրյա ժամկետում ներկայացնում է մրցանակաբաշխության հանձնաժողովին:

4. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը կատարում է հավակնորդների փաստաթղթերի փաթեթների գնում, ձևավորում է հավակնորդների վերջնական ցանկը և ներկայացնում մրցանակաբաշխության հանձնաժողովին: Վերջինս, ըստ հավակնորդների հետ անցկացվող անհատական հարցազրույցների և սույն կարգի 2-րդ կետի պահանջներին առավել բավարարման արդյունքների, կատարում է հաղթողների վերջնական ընտրությունը:

5. Մրցանակաբաշխության մասնակից յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական և հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն համապատասխան մրցույթին մասնակցում է բոլոր անվանակարգերով:

6. Կրթական մրցանակի յուրաքանչյուր անվանակարգի համար նախատեսված պարգևատրման չափը և մրցանակների քանակը՝

1) լավագույն ուսանողների համար.

Մրցանակների անվանակարգը	Պարգևատրման չափը	Մրցանակների քանակը
Գլխավոր մրցանակ	1200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	1 (մեկ)
Լավագույն ասպիրանտ (I կարգ)	1000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	6 (վեց)
Լավագույն ասպիրանտ (II կարգ)	750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	6 (վեց)
Լավագույն մագիստրանտ (I կարգ)	750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	6 (վեց)
Լավագույն մագիստրանտ (II կարգ)	500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	6 (վեց)

Լավագույն բակալավր (I կարգ)	500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	6 (վեց)
Լավագույն բակալավր (II կարգ)	400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	6 (վեց)

2) լավագույն սովորողների համար.

Մրցանակների անվանակարգը	Մեկ մրցանակի պարգևատրման չափը	Մրցանակների քանակը
Գլխավոր մրցանակ	500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	1 (մեկ)
Լավագույն աշակերտ (I կարգ)	200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	5 (հինգ)
Լավագույն աշակերտ (II կարգ)	100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ	5 (հինգ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ